

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆ

ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանը (ԼԱՄԴՇ) ձգտում է ապահովել սեռական ոտնձգություններից զերծ աշխատանքային և ուսումնական միջավայրը: Շրջանը արգելում է սեռական ոտնձգություններ աշխատողների, աշակերտների կամ Շրջանի հետ կամ Շրջանի համար բիզնեսով զբաղվող անձանց նկատմամբ կամ նրանց կողմից, փաստացի կամ ենթադրյալ սեքսի, սեռական կողմնորոշման, գենդերի, գենդերային ինքնության, գենդերային արտահայտության, հղիության, ծննդաբերության, կրծքով կերակրման և դրանց հետ կապված ցանկացած հիվանդությունների հիմքով: Այս քաղաքականությանը չհետևելը նահանգային և դաշնային օրենքների խախտում է:

Սեռական ոտնձգությունները սահմանվում են որպես անցանկալի սեռական բնույթի գործողություններ, ներառյալ սեռական կապի և ծառայությունների խնդրանքներ, և սեռական բնույթի այլ խոսքային, տեսողական կամ ֆիզիկական պահվածք աշխատանքային կամ կրթական միջավայրում գտնվող անձի կողմից՝ հետևյալ պայմաններից որևէ մեկի առկայությամբ.

- Նման պահվածքին զիջելը բացահայտ կամ ոչ-բացահայտ կերպով ներկայացվում է որպես անհատի աշխատանքի, ուսումնական կարգավիճակի կամ առաջընթացի պայման:
- Անհատի կողմից նման պահվածքին զիջելը կամ դա մերժելը օգտագործվում է որպես տվյալ անհատի վրա ազդող՝ աշխատանքի կամ ուսումնական որոշումների հիմք:
- Նման պահվածքը նպատակ ունի բացասական ազդեցություն թողնելու անհատի աշխատանքային կատարողականի կամ ուսման առաջադիմության վրա կամ ստեղծելու վախեցնող, թշնամական կամ վիրավորական աշխատանքային կամ ուսումնական միջավայր:
- Անհատի կողմից նման պահվածքին զիջելը կամ դա մերժելը օգտագործվում է որպես հիմք տվյալ անհատի վրա ազդող ցանկացած որոշման համար, որը վերաբերվում է ուսումնական հաստատությունում առկա նպաստներին և ծառայություններին, պատվոգրերին, ծրագրերին կամ աշխատանքներին:

Վերոհիշյալ վերապահումով պաշտպանված կատեգորիայի փաստացի կամ ենթադրյալ առանձնահատկությունների հիման վրա խտրականության, ոտնձգությունների, ահաբեկման, վիրավորական վարքագծի կամ ծաղրանքի դեպքի ակնհայտ լինելու դեպքում անձնակազմը պարտավոր է անհապաղ քայլեր ձեռնարկել միջամտելու համար, եթե դա անվտանգ է: Նման պահվածքը վարիչին կամ Title IX/ահաբեկման բողոքների հարցերով կառավարչին հայտնելը կարող է լինել պատշաճ միջամտություն: Դպրոցի կամ որևէ բաժնի կողմից խտրականության, ոտնձգությունների, ահաբեկելու, վիրավորական վարքագծի կամ ծաղրանքի մասին ծանուցում ստանալուց հետո, անկախ այդ բանից՝ դա կատարել է աշխատողը, աշակերտը, թե՛ երրորդ կողմը, դպրոցը կամ բաժինը պետք է անհապաղ ձեռնարկի պատշաճ քայլեր՝ քննելու կամ այլ կերպ պարզելու, թե ինչ է տեղի ունեցել: Դպրոցի անձնակազմը պետք է շուտափույթ կերպով ձեռնարկի ողջամտորեն հաշվարկված արդյունավետ քայլեր՝ վերջ դնելու նման պահվածքին, վերացնելու թշնամական միջավայրը, եթե նման միջավայր ստեղծվել է, և կանխելու պահվածքի կրկնվելը: Նշված քայլերը պետք է ձեռնարկվեն անկախ այն բանից՝ անհատը բողոք ներկայացրել է կամ խնդրել է դպրոցին կամ բաժնին՝ ձեռնարկել գործողություններ: Այս քաղաքականությունը վերաբերվում է Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանի վերակացուի իրավասության շրջանակում գտնվող ցանկացած դպրոցի կամ գրասենյակի գործունեությանը կամ հաճախումներին առնչվող բոլոր իրավական ակտերին:

Շրջանի ցանկացած աշակերտ կամ աշխատող, որը կարծում է, որ ինքը եղել է սեռական ոտնձգության զոհ, պետք է խնդիր ներկայացնի դպրոցի վարիչի կամ Title IX/ահաբեկման բողոքների հարցերով կառավարչի ուշադրությանը, որպեսզի ձեռնարկվեն համապատասխան գործողություններ՝ խնդիրը լուծելու նպատակով: Շրջանը արգելում է վրեժխնդիր վարքագիծ սեռական ոտնձգության բողոք ներկայացրած ցանկացած անձի կամ բողոքի քննության գործընթացի ցանկացած մասնակցի դեմ: Բողոքները պետք է անհապաղ հետաքննվեն այնպիսի ձևով, որ հարգվի կողմերի գաղտնիությունը:

Աշակերտների կամ նրանց կողմից սեռական ոտնձգության առնչվող Շրջանի քաղաքականության և ընթացակարգերի, այդ թվում՝ սեռական ոտնձգության վերաբերյալ բողոք ներկայացնելու կարգի մասին հարցումներով, դիմել՝

Կրթության հավասարության համապատասխանության գրասենյակ
Julie Hall-Panameño, ԼԱՄԴՇ-ի 504-րդ կետի և IX վերնագրի (Title IX) համակարգող
(213) 241-7682

Աշխատող-աշխատող, աշակերտ-աշխատող հարաբերություններում կամ աշխատանքի/զբաղվածության հետ կապված խտրականության, ոտնձգությունների, ահաբեկման կամ վիրավորական վարքագծի վերաբերյալ հարցումներով կամ բողոքներով դիմել

Հավասար հնարավորությունների բաժին
(213) 241-7685

Երկու գրասենյակներն էլ գտնվում են հետևյալ հասցեում.
Los Angeles Unified School District
333 South Beaudry Avenue - 20th Floor
Los Angeles, CA 90017